

ԿԱՐԾԻՔ

ՀՈՒՓՍԻՍԵ ՎԱՀԵԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ «ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ (զուգադրական քննություն)» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ներկայացված Ժ. 02.02.-«Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Ատենախոսության նյութը լեզվի կարևոր բաժիններից մեկի՝ դարձվածաբանության և նրա ուսումնասիրության միավորի՝ դարձվածքի հայերեն-պարսկերեն զուգադրական քննություն է: Ատենախոսը զուգադրական քննության է ենթարկել արդի հայերենի և պարսկերենի՝ *անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները*: Որպես ցեղակից լեզուներ՝ հայերենն ու պարսկերենն ունեն որոշակի ընդհանրություններ, ինչն առավել ակնհայտ դրսևորվում է բառապաշարի մեջ: Հայտնի իրողություն է նաև, որ դարձվածքը ազգային մտածողության խտացված արտահայտություն է, ինչ-որ տեղ՝ անթարգմանելի լեզվական միավոր, սակայն Հոիփսիմե Թորոսյանը ոչ միայն փորձել է բացահայտել ու ներկայացնել արդի հայերենի և պարսկերենի՝ *անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների* իմաստային խմբերն ու միջկապակցական իմաստները, դրանց քերականական առանձնահատկությունները, այլև ուսումնասիրել է անվանողական ու հաղորդակցական դարձվածքների կառուցվածքային առանձնահատկությունները՝ այդ ամենի հիման վրա ցույց տալով դարձվածքների հիշյալ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային ինքնատիպ լեզվամտածողությամբ, իսկ հայերենում ու պարսկերենում առկա *դարձվածային համապատասխանությունների և դարձվածային համարժեքների* առկայությունը՝ ատենախոսը համարում է հայերի և իրանցիների լեզվամտածողության ընդհանրությունների վկայություն: Հեղինակն այս ուսումնասիրությունը կարևորել է նաև միջմշակութային հաղորդակցության առումով:

Ուսումնասիրության *ներածության* համապատասխան բաժիններում ատենախոսն անդրադարձել է լեզվաբանական գրականության մեջ դարձվածքի ըմբռնմանը, հստակեցրել իր դիրքորոշումը դարձվածքի ճանաչման ու սահմանման հարցում՝ նշելով *նեղ իմաստով ըմբռնման* կողմնակցությունը, ապա առանձին ներկայացրել անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների բնույթը, նկատել, որ այդ դարձվածքները՝ որպես անհատի բնութագրիչներ, արտահայտում են անձի արտաքին կամ ներքին հատկանիշներ:

*Առաջին գլխի («Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների իմաստային-թեմատիկ խմբերն ու միջկապակցական իմաստներն արդի հայերենում»)* համապատասխան ենթազույգներում մանրամասն անդրադարձել է անձի հատկանիշ արտահայ-

տող դարձվածքների *խմաստային, թեմատիկ* խմբերին, դրանց *միջկապակցական իմաստներին*:

Ատենախոսության *երկրորդ գլխի («Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների կառուցվածքային տիպերն արդի հայերենում և պարսկերենում»)* երկու ենթագլխում (*համապատասխան ենթաբաժիններով*) քննվել են անձի հատկանիշ արտահայտող անվանողական ու հաղորդակցական դարձվածքների կառուցատիպերը: Անվանողական դարձվածքների կառուցատիպերի քննության ժամանակ ատենախոսն առանձին-առանձին (*համապատասխան ենթաբաժիններում*) ներկայացրել է *գոյականական, ածականական և բայական դարձվածքների կառուցատիպերը՝ տա-լով կաղապարներ և նշելով, թե ուսումնասիրվող լեզուներից յուրաքանչյուրին կաղապարային ո՛ր տիպն է բնորոշ՝ միաժամանակ անդրադառնալով նաև երկու լեզուների որոշ դարձվածքների համարժեքության հարցին*:

*Երրորդ գլխում («Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների քերականական առանձնահատկություններն արդի հայերենում և պարսկերենում»)* քննվել ու առանձին ենթագլուխներով ներկայացվել են *անձի հատկանիշ արտահայտող անվանողական (գոյականական, ածականական և բայական) և հաղորդակցական դարձվածքների ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները*:

Աշխատանքն ամփոփվել է եզրակացություններով, այն ունի օգտագործված գրականության ու բառարանների հարուստ ցանկ:

Ատենախոսությունը շարադրված է կյուֆի բազմակողմանի իմացությամբ և գիտական պատշաճ մակարդակով: Ատենախոսը, կիրառելով ուսումնասիրության նկարագրական, զուգադրական-համեմատական մեթոդներ, կարողացել է իրագործել առաջադիր նպատակն ու խնդիրները: Մույն ուսումնասիրությունն ունի և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն:

Հաջողված են ատենախոսության այն հատվածները, որոնցում համապատասխան գծապատկերներով ներկայացվել է հայերեն-պարսկերեն դարձվածքների համեմատական-զուգադրական քննությունը, ինչպես նաև անդրադարձը (ոչ բոլոր դեպքերում) համարժեքության հարցին: Ատենախոսը մանրամասն վերլուծությունների արդյունքում ի մի է բերել ուսումնասիրվող լեզուներից յուրաքանչյուրին բնորոշ դարձվածքների խոսքիմասային արտահայտվածությունը, ձևավորման կաղապարները:

Գնահատելով Հ. Թորոսյանի իրականացրած ուսումնասիրությունն ու դրա արդյունքը՝ այնուամենայնիվ, հարկ ենք համարում անդրադառնալ աշխատանքում տեղ գտած *որոշ անճշտությունների, ոչ հստակ ձևակերպումների, բառագործածության սխալների ու վրիպակների*: Այսպես՝

1. Ատենախոսը *ներածության* մեջ անդրադառնալով դարձվածքի ուսումնասիրության հարցերին՝ հստակեցրել է սեփական դիրքորոշումը՝ նախընտրելով դարձվածքի *նեղ*



իմաստով ըմբռնումը, սակայն ատենախոսության երկրորդ և երրորդ գլուխներում առանձին-առանձին քննել ու ներկայացրել է *անվանողական ու հաղորդակցական* դարձվածքները՝ տալով դրանց կառուցատիպերն ու ձևաբանաշարահյուսական առանձնահատկությունները՝ դուրս գալով դարձվածքի ուսումնասիրման համար իր ընտրած (ևեդ) սահմաններից ու ընդարձակելով ուսումնասիրության ոլորտը (լայն մոտեցում):

Նեդ մոտեցմամբ դարձվածքի ուսումնասիրությունն ինչ-որ առումով միակողմանի և ոչ ամբողջական արդյունք կտար, քանի որ, ինչպես ատենախոսն է նշել իր խոսքում, «...պարսկերենում դարձվածքները բավականին լայն կիրառական ոլորտ ունեն՝ առօրյա-խոսակցականից մինչև գրական-գեղարվեստական, ընդհուպ պաշտոնական-հրապարակախոսական ոճերը» և, որ «դարձվածքը ձուլված է պարսկերենի բառային կազմին» (էջ 10), մյուս կողմից էլ կպահանջվեր այլ ծավալի և ուղղվածության աշխատանք: Այս դեպքում ատենախոսը որոշակիորեն շեղվել է իր որդեգրած սկզբունքից՝ փորձելով ապահովել համակողմանի քննություն:

2. Տերմինագործածության հարցում ատենախոսը կիրառում է շատերի կողմից ընդունելի *դարձվածք* տերմինը, սակայն լեզվաբանների կարծիքներ մեջբերելիս հանդիպում ենք նաև *դարձված* տերմինի կիրառությանը (էջ 7), ուստի ցանկալի կլիներ հստակեցնել և հիմնավորել սեփական դիրքորոշումը: Նույն կերպ էլ հումանիշ դարձվածքների կառուցատիպերը քննելիս տարբերակել է *տարակառույց* և *նույնակառույց տիպերը*, սակայն շարադրանքում *նույնակառույց* տերմինի փոխարեն գործածում է *միակառույց* ձևը (էջ 61):
3. Անձնանուններով դարձվածքների քննությանը վերաբերող ենթաբաժնում (1.2.5) ատենախոսը նկատում է որ «դիտարկվող լեզուներում անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների ձևավորմանը կարող են մասնակցել նաև հատուկ անունները: *Հատուկ անուն-բաղադրիչներով կազմված դարձվածքները գերակշռում են պարսկերենում: Հայերենում կա երկու դարձվածք. սուտ Քրիստոս-խաբեբա, կեղծավոր, Ագրահիլի ծնունդ-չար, չարագործ*» (էջ 49): Ասվածին հավելելով՝ կարող ենք նշել աստվածաշնչյան կամ գեղարվեստական գրականությունից անցած շատ ԴՄ-ներ. ինչպես՝ *Եվայի զգեստով, Նոյի ագռավ, Նոյի աղավնի, Նոյի թվից (եկած՝ ունի և՛ մակբայական, և՛ հատկանշային իմաստ), Քաջ Նազար, Քաջ Նազարի բախտը ունենալ, Չախտող Փանոս, Տեր Թողիկ (ծեծի ու բռնության միջոցով դասավանդող)*: Հեղինակը *նման* դարձվածքների անդրադարձել է այլ հարցի կապակցությամբ (էջ 67), բայց ոչ հիշյալ հատվածում:
4. Որոշ դարձվածքների իմաստներ ունեն ոչ հստակ կամ թերի բացատրություն (ինչպես՝ փակ լեզու՝ *չկամ արտահայտվող: Կամ՝ բարի ծաղիկ-անառակ, անուն, պատիվ չունեցող* (էջ 45): Վերջին դարձվածքը ունի *կարգին մարդ* իմաստը, բայց բարբառներում կիրառվում է նաև *բարի պտուղ դարձվածքի իմաստով, այն է՝ անարժան, չար, անպետք*: Այս ամենը միայն համացանցային աղբյուրը հիմք ունենալու արդյունք է գուցե, քանի որ նույն կերպ



մեկնաբանված է նաև համացանցում): Երբեմն էլ դարձվածքի իմաստային ոչ բոլոր դրսևորումներն են նշված. ինչպես՝ ցորեն լեզու նշանակում է *քաղցր լեզու*, իսկ որոշ բարբառներում նաև՝ *անպատկառ, լեզվանի* (աշխատանքում նշված է վերջին իմաստը):

Պարսկերեն շատ դարձվածքներ, որ ատենախոսը ներառել է համապատասխան բաժիններում, բովանդակային և կառուցվածքային առումով համարժեք են հայերենի նույն դարձվածքներին (ինչպես՝ *ականջը ծանր է՝ խուլ, չլսող* (էջ 29), *սիրտս թեթևացավ* (էջ 31), *ձեռքով ու ոտքով* (էջ 32): Մի երկու դեպքում ատենախոսը նշել է համարժեքության մասին (օրինակ՝ *եղնիկի պես, բլբուլի պես*, էջ 78-79): Հանդիպում են նաև կառուցվածքով նույն, բայց իմաստով տարբեր դարձվածքներ. ինչպես՝ *երեսը չի բռնում*- պարսկերենում՝ *ամոթ չունի* (էջ 36), իսկ հայերենում՝ ամաչկոտ, անհամարձակ: Կամ՝ *լեզուն կապ ընկավ՝ զարմացած*, հիացած (էջ 62), հայերենում՝ պապանձվել և այլն: Ցանկալի կլիներ սրանք ևս խմբավորել ու համակարգել:

Հայերենի ածականական դարձվածքների շարահյուսական կիրառության առանձնահատկությունները քննելիս կան ընդհանրական իմաստով կիրառություններ: Այսպես՝ «Իմ կարճ խելքով այսքանն եմ հասկանում» ընդգծվածը համարվել է *միջոցի անուղղակի խնդիր* (էջ 101): Մեր կարծիքով այստեղ առաջնայինը *հիմունքի* իմաստն է:

5. *Կետադրական՝ «Իրանցի լեզվաբանների (՝) դարձվածաբանության վերաբերյալ տեսակետները...»* (էջ 10): «Օժտված լինելով նոր (,) պատկերավոր-արտահայտիչ (կամ՝ ,) իմաստներ ձևավորելու ներունակությամբ...» (էջ 23); «... գուգադրվող լեզուներում(>) ըստ բաղադրիչների քանակի(>) լինում են...» և՝ «Այս կապակցությունները կազմությամբ բայական հարադրություններ են, սակայն (> ,) քանի որ բաղադրիչների առանձին իմաստը պատճառաբանված չէ, և...կա, այս միավորները համարում են դարձվածքներ» (էջ 83, 96, 116):

6. *Կան ոչ հստակ շարադրանքով հաստատվածներ*: Ինչպես՝ «Այդպիսի դարձվածքների գերադաս բաղադրիչ են դառնում կենդանանունները, սողունների, միջատների անունները, թռչնանունները և այլն, որոնք մարդուն վերագրում են իրենց բնորոշ հատկանիշները» (էջ 44): Ոչ թե տվյալ անվանումներն են *վերագրում*, այլ դրանցով՝ այդ անվանումներով, տվյալ կենդանատեսակների համապատասխան, նրանց բնորոշ հատկանիշներն են վերագրվում մարդկանց:

*Վրիպակներ և սխալներ՝ էջ 10* («Դարձվածային միավորը մեկից ավելի...»՝ դ>Դ), էջ 25 («...գունատ լինել, որում բաղադրիչ անդամ է դարձել նաև *կարմիր դերանունը>գունանունը կամ ածականը*»), էջ 31(*ձեռ ու ոտ(>ը) կոտրված*) և էջ 40 (*ամենեղ>անմեղ*), էջ 81 (եռանդամ և բազմա-նրամ> բազման-դամ), էջ 110 (համակց-ված), էջ 30 (*զղայինացած> զղայնացած*), էջ 107 (*սիրտտ>սիրտդ*), էջ 14; էջ 99; էջ 120:

Երբեմն պարսկերեն դարձվածքների թարգմանական տարբերակում գործածել է օտարաբանություն: Օրինակ՝ «...մեծ ափսեի շուրջը ինչ-որ մեկի համար բաղրիջան շարել//



բաղրիջան շարող» սմբուկ...» (էջ74): Ընդգծվածն այսօր էլ մեր լեզվի խոսակցական կամ բարբառային տարբերակներում կիրառելի է, բայց ունի իր գրական համարժեքը:

Ակներն է, որ նկատված թերությունները մասնակի են, բնավ չեն ստվերում կատարված աշխատանքը: Առաջարկում ենք, որ ատենախոսը նշված դիտողություններն ընդունելու դեպքում հետազայում հետազոտությունը շարունակելիս կամ տպագրության նախապատրաստելիս վերանայի դրանք՝ կատարելով համապատասխան փոփոխություններ: Այնուամենայնիվ, բովանդակության շարադրանքը, հեղինակի ակադեմիական ազնվությունը վկայում են, որ ատենախոսը կատարել է լեզվաբանական լուրջ հետազոտություն:

Հոփսիսիմե Վահեի Թորոսյանի «Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներն արդի հայերենում և պարսկերենում (զուգադրական քննություն)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները և համապատասխանում է Ժ.02.02. դասիչին՝ ներկայացված «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման, ուստի և նրա հեղինակը արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Արմենուհի Արտուշի Ավագյան

10.05.2022թ

Ա.Ավագյանի տողագրությունը հաստատում եմ՝

ՇՊՀ-ի գիտքարտուղար (վ.գ.թ., դոցենտ Կ. Ռ. Պետրոսյան)

